

կեաց եւ կազմեաց զ... եւ զուրբ լիջիք յի- չել... ի քրիստոսի եւ նմա փառք յաւիտեան»:

Բ. էջ 245. Ստորին լուսանցքին վրայ յոյժ մանրատառ.

«Ո՛ր սպանանեաց զիս քունն յայսմ տե- ղըջ. կենդանի է տէր. եւս առաւել ճանճն զաչս իմ եհան»:

Գ. էջ 471. Ստորին լուսանցքին վրայ.

«Ո՛հ բազում վիշտս ի ճանճէս»:

Երկրորդ ձեռագիրը Հաւաքածոյ մըն է Աթանասի եւ Կիւրղի հարց ու պատասխանի եւ ճշմարտական վարուց, զբուսած յԱյն- թապ: Յիշատակարանը կը պատմէ որ Հա- ւաքածուս զբուսեցաւ 1669ին, երկրորդ ան- զամ կաթողիկոսութեան Կիլիկիոյ Տէր Խա- շատուրին, որ այդ տարին երկրորդ անգամ ըլլալով աթոռ նստաւ: Ողբացեալ Բարդէն կաթողիկոս առձեռն յիշատակարաններու վրայ հիմնուած, գրեց իր — Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ — ուր սակայն Խա- շատուր Գ. Գաղատացոյ (Մինոէրճի) վրայ խօսած ատեն երբեք չի յիշեր անոր երկրորդ կաթողիկոսութեան պարագան: Կրթնած ձեռագրին յետագայ կարեւոր յիշատակարա- նին վրայ, կրնանք որոշապէս ըսել՝ որ Խա- շատուր Հալէպի մէջ 1663ին Ասորոց Ան- զրէաս եպիսկոպոսը եւ 1664ին ալ Եղիազար եպիսկոպոսը կաթողիկոս օրհնեց, Եկեղեցւոյ մէջ ծաղած յայտնի դժուարութիւններով պաշտօնանկ եղաւ եւ կամ ինքը խոհեմութիւն համարեց քաշուիլ ու 1669ին միայն վերստին կոչուեցաւ կաթողիկոսութեան, հակադրել տալու զիտաւորութեամբ՝ անտարակոյ՝ Հա- լէպ նստող Դաւիթ Կարկառեցի հակաթոռ կաթողիկոսին, փրկելով այսպէս ազգային արժանապատուութիւնը:

2. Հ Ա Ի Ա Ք Ա Յ Ո Յ

Հին Թիւ՝ չունի: ՌձԺԸ = 1669:

Թիւրք. 135: — Մեծն Թիւրք. 13 X 9,5 X 3 սնդմ.: — Գրոնթիւն՝ միասին, իբր 9 X 6 սնդմ.: — Տնդ.՝ պէս պէս՝ 17, 18, 19: — Թեթիւ՝ առաջին մասին (Հարցումն Աթանասի) 6: Ա՝ 13, Բ, Գ եւ Ե՝ 12, Գ եւ Զ՝ 11: Երկրորդ մասին (ի Հարցումն վա- րուց) 5: Ա՝ 11, Բ, Գ եւ Դ՝ 12, Ե՝ 15: — Նիթի՝ հասարակ հաստ քուրք, անողորկ: — ԿԱՁՄ՝ շագա-

7 Տես «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ», Բարդէն Կաթողիկոս. Տպ. Անթիլիան (ընդ մամուլ):

նակագոյն կաշեպատ, խաւաքարեայ, լանջով ու բի- կունով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՐ՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ շատ լաւ պահուած. միայն կազմը քիչ մը խախտած: — ԳԱՏԱՐԿ ԹՈՒՂԹՐՔ՝ 268—270 էջերը՝ ի վերջ: — ԳԻՐ՝ սեւ ընտիր մեղանով նոսրգիր. հա- մարները ունին կարմրագեղ սկզբնատառեր: Կարմիրով են նոյնպէս հարց — պատասխանիք: — ԶԱՐԴԱԳՐԵՐԸ, ԼՈՒՍԱՆՅՅԻԹ ԶԱՐԴԵՐԸ ու մէկ ԽՈՐԱՆԻԿԸ՝ գծագրա- կան պարզ փորձեր են, սեւով: — ԳՐԻՉ՝ Պաղտասար երէց: — ՍՏԱՅՈՂ՝ գրիչը: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌձԺԸ (1669): — ՏԵՂԻ՝ Այնթապ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ ձե- ռագիրս մաս կը կազմէ Թուրքիոյ Կեդր. Գօլէնի (այժմ Հալէպ Գօլէժ) ձեռագրաց հաւաքման:

Մատենա է Հաւաքածոյ, թղթեայ, փոքրադիր, կազմուած, որ կը բովանդակէ.

1. էջ 1—6. Յանկ նիւթոց, իբր 114 զլուխք:

2. էջ 7—132. Երանելոյն Աթանասի ար- քեպիսկոպոսի Աղեքսանդրացոյ: — Հարց- մունք վայելչակամք, եւ պատասխանի կիւրղի Երուսաղիմայ Հայրապետի. օղնեա՛ հողիդ սուրբ աստուած: — Հետեւումն համարիմ ընդ Աստուծոյ երիս բանս. եւ ապա այսու- հետեւ ի մէջ գալ. քանզի բազմաց խնդիր լի- նել վասն այսմ... (Հմմտ. Տաշեան, Յուսէպ, էջ 663—664 եւ Յուսէպ Ձեռագրաց Լիւրաւայի, Հր. Անտեան, Թիւ 1):

3. էջ 133—143. Կանոն եւ պատուիրան յամենայն մեղացն, գոր գործել տայ չարն սատանայ. — «Եղբայրաստանն Խ. քառասնից տայ. Ե. տարի զլուսին չածիլէ. Գ. տարի չորսպահէ կենա՛ ազուհաց ուտէ...»:

4. էջ 145—218. Ի Հարանց վարուց: — «Մեծն Անտոն, ասաց Երեք խաւք. զոր թէ ասնէ ոք ապրի չառնել ինչ ատանց վկայու- թեան...»:

5. էջ 218—243. Ի վարուց նգնաւորաց այլ բանից ասարոց. — Երբեմն հայր Անտոն աղօթէր ի խրճիթն իւրում. եւ եղև առ նա ձայն որ ասէր. Անտոնիէ...»:

6. էջ 243—245. Երանելոյն Մակարա բանի խրատու ոգեղան. — «Որ ոչ քեցեացի յամենայն հիւթից յաւիտենիս ոչ կարէ ժա- ոանդել զսոյոյ կեանս...»:

7. էջ 245—247. Հարցումն խրատուց միանձանց կրաւաւորաց. — «Բարիք է ստանալ երկուս հանդերձս...»:

8. էջ 247—267. Գրիգորի Նարեկացոյ պաւք վասն ջերման. — «Արդ այսքանեաց անբաւից հրաշից հանդերձիչ հայր ամենա՛ ստեղծ...»:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Հատ մը միայն ի վերջ ասալին մասին, յէջ 142.

«Գրեցաւ սակաւ բանքս որ է յառ՛ջին հարցմունք սրբոյն Աթանասի եւ Կիւրղի. եւ սակաւ կանոնք. եւ սակաւ հարանց վարք ի թվ. Հայոց ՌձԺԸ (1669). ամին ի Բ. ի կա- թողիկոսութեան Կիլիկիոյ Տէր հաշատուրին զոր այսմ յամի կրկին նստաւ յաթոռն. եւ յայսմ ամի եղև մահ տարածամ ի յԱնթափ, ի Քիլիս եւ ի Հալապ. սկսաւ զատկին մինչեւ ի փոխման աստուածածնին զոր Տէր Աստուած ողորմեացի ննջեցելոցն: Ձեռամբ սուտ անուն Պաղտասար իրիցու զոր անուամբ միայն եմ քահանայ եւ զործով ոչ. ի քաղաքն յԱնթափ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին յեկե- ղեցւայն: Արդ աղաչեմ զձեզ ով զասք քահա- նայից եւ որք հանդիպիք ի սմա կարգալով կամ տեսանելով. յիշեցէք ի մաքրափայլ յա- զօթս ձեր զմեղապարտ զձողս մէկ հայր մե- զայիւ. եւ որ յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ յԱստուծոյ որ է անբ՛նեալ յաւիտեանս յաւի- տենից ամէն Հայր մեր որ յե»:

ԱՐՏԱԻԱԶԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



ՅՈՒՅԸԿ ՀՃՅԵՐԸՆ ՁԵՌԵԳՐԸՑ Ի ԲՈՒԼՎԵՐԸ

(Շարունակութիւն):

5.

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թիւրք. 335 (= էջ 670): — Մեծն Թիւրք. 19 X 13: — Գրոնթիւն՝ երկուս 9 X 6,50: — Տնդ.՝ 19: — Նիթի՝ քուրք ողորկ: — ԿԱՁՄ՝ տախ- տակեայ, ամուր, համակ արծաթապատ քիկունով եւ լանջով. երկու կողմն վրայ գոյց մը նկարներ՝ ա՛ յաշելութիւնը, իսկ բ՛ը՝ հաւաթորէն Համբարձում: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿՐ՝ երկու հաս սկիզբը եւ երկու հաս վերջը, որոնք առնուած են մագաղաքեայ երկաւն ուրիշ աւետարանէ մը, ծայրերէն կտրուած եւ պատշաճեցուած կազմիս. ուրկէ վնասուած են ծայրի գրերը: — ՀԱՆԳԱՄԱՆԻՔ՝ մաքուր եւ բաւական լա- կապաւնուած, միայն տեղ տեղ անջան վնասումներ Գրի, շօշափումի հետեւանով: — ԳԱՏԱՐԿ՝ Թղ. 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13, 14, 15ա, 105ա, 254բ, 255ա, 330բ, 331, 332, 333, 334, 335: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՍԿՁԲՆԱԻՈՒ ԲՈՒԹԻՒՆՔ՝ երկնեայ եւ ոսկեղբուր: — ՍԿՁԲԻ ԳԼԽԱԳԻՐՔ՝ կենդանագիր, քնչնագիր եւ գարգալի, կարմիր մեղանով: — ԼՈՒՍԱՆՅՅԱԶԱՐԳՐ՝ բազմաբիւ (230 հատ), գունագեղ, շէնդ: — ԽՈՐԱՆԻՔ՝ քղ. 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 16ա, 106ա, 162ա,

256ա սիւնագարդ եւ բաւականին յաջող, երկնեայ եւ ոսկեղբուր: — ՆԿԱՐՔ՝ Զորս Աւետարանիչները (քղ. 15բ, 105բ, 150բ, 161բ, 255բ): Բաւական յաջող եւ գեղեցիկ: — ԳՐԻՉ՝ Գրիգոր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌձԸ (1617): — ՏԵՂԻ՝ Քեօրսիս: — ԾԱՂԿՈՂ՝ անձա- նօք: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Աղբաւաւապոյտայ Ս. Թո- բաս Եկեղեցւոյ, այժմ ի պահ Ֆիլիպէի Ս. Գեորգ Եկե- ղեցւոյ գանձատունը՝ 1922էն ի վեր:

Մատենա է Աւետարան: Մատթէոս (թղ. 16ա—104բ), Մարկոս (թղ. 106ա— 161ա), Լուկաս (թղ. 162ա—254ա), Յով- հաննէս (թղ. 256ա—324բ), եւ Յիշատակա- րան (թղ. 325ա—330ա): — Թղ. 3բ, 4ա (Եւսեբի Կարպիանոսի սիրելի եղբոր ի Տէր սղջոյն) Ամո(վ)նի Աղեքսանդրացոյ. եւ հա- մեմատական տախտակներ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 254ա. «Չողորմելի եւ զչարեաւք լցեալս ո՛վ տէր յիշեա, թէ եւ չե՛մ արժանի Գրիգոր զըջիլ»:

2. Թղ. 325ա—330ա. Բանի յիշատակի կատարման Սուրբ աւետարանի. «Փառք...: Կերպացեալ այս բանիւ որդիք սիննի քահա- նայք եւ մանկունք ընտրեալք յաշխարհի: Չատաճնորդն ընտրեաց բանաւոր հաւտին Քրիստոսի ըզտէր Յակոբ եպիսկոպոս Քաւ- թնիկացի որ եւ գրել երես զսուրբ աւետա- րանս յիշատակ իւր հողոյն եւ հաւրն տէր Պետրոս քահանային եւ մաւրն Մարթային եւ Եղբարն Չաքարիային եւ ջուրոջն Լալիա- թոնին եւ մեծ մաւրս ձաշիկին եւ այլ ամե- նայն արեան մերձաւորացս: Գրեցաւ զսուրբ աւետարանս ի մայրաքաղաքն Քաւթնիկա ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սրբոյն Սարգսի զաւրաժարին եւ սրբոյն Թէո- զորոսի զինաւորին ի յաթոռակալութեան սուրբ էջմիածնա տեան տէր Մելքիսեթ կա- թողիկոսին եւ միւս այլ քաղաքին Կիլիկիա սր կոչի Սիս ի յաթոռակալութեան սորա տեան տէր Յովաննէս կաթողիկոսին: Եւ վարդապետին իմոյ տէր Գրիգոր քաջ բա- բունապետին Կեսարիացոյ զոր Տէր Աստուած յերկար ամաւք պահեցէ զնոսա մինչեւ ի խորին ծերութիւն: Ընծայ մատուցի զսա յի- շատակ ինձ եւ ծնողաց իմոյ ըզվերոյ գրեալս յիշեցէք ի Քրիստոս զի թերեւս զացուք ողոր- մութիւն յահեղ աւուրն համառաւտի որ աւրն է մեծ եւ երեւելի այսու եւ յիշմամբ ձեր սուրբ ազաւթիւք եւ մաղթանաւք: Եւ արդ յերես անկեալ աղաչեմ եւ ի գուճս ելեալ տատան- մամբ մատամբս եւ աղերասնաց մաղթա- նաւք աղաչելով խնդրեմ ի սրբազունը ժողո- վեալ եզրարցոյ որ աստ ժողովեալ էք յաղագս

ամենայն աշխարհի աղաւթել: Արդ՝ աղաչեմ զձեզ ով սրբասէր քահանայք յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զյետինս եւ զանպիտանս յամենայն բարեաց յունայնս զՅակոբ եպիսկոպոսս որ անուամբս եմ միայն եւ զործովս ոչ եւ զհայրն իմ զտէր Պետրոս քահանայն որ երիտասարդ ամաւ փոխեցաւ ի Քրիստոս զոր տէր Աստուած զճշմարիտ քահանայից զասին զասակից եւ սոսակակից արասցէ եւ զմայրն իմ զՄարթայն եւ թանասուննամեա փոխեցաւ ի Քրիստոս. եւ զեղբայրն իմ Չաքարիայն որ եւ ինքն ել զնաց ի վաճառս Եգիպտոս եւ անտի նաւեալ էր եւ ոչ զիտեցաք թէ զինչ եղեւ եւ եթող ըզմեզ անմխիթար զոր տէր Աստուած հանդուսցէ զնա ի տեղուջ լուսոյ եւ ի տեղի հանդրատեան եւ լսել տացէ զբանաւէտ զճայնն եկայք արհնեալք հաւր իմոյ. եւ այլ աղբականք իմ զվերոյ զրեալսն: Եւ զարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ ով ընթերցողք սուրբ աւետարանին յիշեցէք զՅակոբ եպիսկոպոսս եւ մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ որ ելի ի հայրենի քաղաքէս Քաւթաճիայ քահանաւ. ու խոսացեալ էր անձին իմոյ զնալ ի վանքն Կրակայ եւ անդ կացեալ ամս տասն ի յառաջնորդութեանն սուրբ ուխտիս տէր Յոհաննէս եպիսկոպոսին եւ երաժիշտ տէր Թումա վարդապետին եւ ի փակակալութեանն տէր Անտոն Ծերունի քահանային եւ զտէր Կարապետն Բաղբեցի որք բազում աշխատեցան ի վրայ իմ ուսուցանելով եւ խրատելով հոգեւոր թէ մարմնաւոր շարականաւ եւ սազմութիւն զոր տէր Աստուած հատուցանէ: Եւ անտի զնացի սուրբ Էջմիածին որ է աթոռ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ այլ բազում վանորայս տեսեալ եւ ուրախ եղաք սուրբ ըզկարգ կրանաւորութեան ի յերընջակայ սուրբ Կարապետին ի Գրիգոր եպիսկոպոսէն. յետոյ զնացի ի վանքն Տաթևու եւ անդ կացեալ տարի մի եւ ամիս յետոյ եկաք ի Նախչիվան եւ անդ սուրբ զկարգն հայրապետական Մելքիսեթ կաթողիկոսէ. ժի. ամ կեցեալ ի պանդխտութեան եւ ապա եկեալ ի հայրենի աշխարհն իմ Քաւթաճիայ: Արդ՝ կրկին անգամ երես անկեալ աղաչեմ զամենեան մանաւանդ զզասս քահանայից որք վայելէք ի քառասունամեայ հոսանաց կենդանական աստուածախօս աւետարանական աստրանիցս: Մանաւանդ յորժամ բառնայք ի ժամ սոսկալի պատարագին յայնժամ նովին սուրբ աւետարանաւ եւ միջնորդական կենարար

հրաշիւք սուրբ պատարագին յիշեալիք զստացող սուրբ կտակիս զառաջասացեալսն եւ զամենայն աղբայինս զկենդանիս եւ զհանդուցեալսն եւ որք յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ, զի թերեւս ի ձեռն սրբափայլ աղօթից ձերոց զբարեց թեթեւութիւն ծովացեալ եւ անչափ մեղաց իմոց զի յոյժ զաւրաւոր են աղաւթք արդարոցդ աւելնականութիւն եւ ինքն առատապարգեւն եւ ողորմածն Քրիստոս ներեսցէ մեզ յիշելոցս եւ ձեզ յիշելոցդ իւր անեղ ատենին ամէն: Յիշատակ է սուրբ աւետարանս ինձ եւ իմ ննջեցելոց անջնջելի. ինամով պահողքն աւրհնին Աստուծոյ. եւ որք անիոյթ արասցեն զհակառակն կըրեսցեն: Ով եղբարք ոչ եթէ վասն մարմնաւոր ինչ լուծայի զբել տուաք զայս աւրինակս որ էր ստոյգ եւ ճշգրտիւ զբեալ ի Սահակ թարգմանչի աւրինակէն եւ ցանկացող եղա սուրբ աւետարանին մեծաւ փախաքանաւք եւ ետուր զբել յիշատակ ինձ եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց ի դառն եւ ի նեղ ժամանակիս ի թվին Հայոց ՌԿՁ որ էր հելձելաշարժ ի վրայ կարմիր կտակին: Արդ՝ աղաչեմ զամենեան սիրովն Քրիստոսի որք հանդիպիք լուսազարդ տառիս եւ վայելէք ուրախարար բարիս կարգալով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զվերոյ զրեալսն հայր մեղայիւ եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւսանգամ զալուստն ամէն»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ՝ Մատեանս մեր խընդրանքով ցուցակագրած է՝

ՆԵՐՍԵՍ ԳԱՍՏԱԳԵԱՆ  
Չեռագրիս մէջ յիշուած Յակոբ արքեպ. Բէօթահեցոյ ի վայելումն 1611ին Յակոբ Թօխաթեցի կը զբէ Մաշթոց մը (հմմտ. Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, Գ., Վենետ. 1904, էջ ԺԴ), իսկ Գրիգոր Լեհցի 1619ին Սաղմոսարան մը (հմմտ. Սարգիսեան՝ Յուցակ հայ. ձեռ. Մատ. Վենետիկ, Թ. 55, էջ 273—274 եւ Տաշեան՝ Յուցակ հայ. ձեռ. Մխիթ. ի Վրեննա, Թ. 333, էջ 778):

**6. Ք Ա Ր Ո Չ Գ Ի Ր Ք Յ Ա Կ Ո Ր Ն Ա Լ Ե Ա Ն Ի Ռ Ո Ւ Ս Ճ Ո Ւ Գ**

ԹՈՒՂԹՔ՝ 512 (էջ 4 + 1000 + 20): — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 33 × 23: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ Երկսիւն 27 × 17: — ՏՈՂՔ՝ 33: — ԹԵՐԹՔ՝ չեն նշանակուած: — ՆԻԻԹ՝ գորաւոր բուրք: — ԿԱՁՄ՝ կաշեպատ փայտ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿ՝ չուցի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ: — ԽՈՐԱՆՔ եւ ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝

չուցի: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ խեղճ բաներ: — ՆԿԱՐՔ՝ չուցի: — ԽՈՐԱՆՔ՝ սեւագիր: — ԴԱՏԱՐԿՔ՝ աղբի՛ երկու, ետեւը՝ երեք բուրք: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՄԼԸ (1789): — ԳՐԻԶ՝ ՏԵՐ Միկրիչ: — ՏԵՂԻ՛ Եղոկիա: — ՏԷՐ՝ Դաւիթ վարդապետ: — ԿԱՁՄՈՂ՝ Յակոբ դպիր: — ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ էջ 1017: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ՝ Սեպիակամուրիւն Ռուսուգի Ս. Աստուածածին եկեղեցւոյ:

Մատեանս է՝ Քարոզագիրք.

1. Թղ. 3ա. Կը սկսի «Աղբերս առ սուրբ Հոգին ի բոլոր գործս զայս նուիրեմ քեզ Հոգի սուրբ Աստուած զքոյս ի քոյոցդ քեզ առաջնոյ պարգեւիդ ընծայելով աղքատս ամենահարուստի Տեառնդ իմոյ զիս ստացողիդ որպէս եւ աստուածարանն Գրիգոր ի ճառին, որ ի վերայ քոյ աստուածարանեաց թէ մեք...: Չայս քարոզ ի պատիւ աստուածութեանդ նուիրելով զոգնութիւն քո հայցեմ նուաստս ի բանասիրաց Յակոբ եւեթ անարժան պատրիարք Կ. Պոլսոյ... նմին իրի յուրբաթու աւուրն վերջնոյ մեծի բարեկենդանին սկսայ ի փառս քոյ յամի մարգեղութեան քեւ օծեցելոյն Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի 1755 եւ Հայոց ՌՄԴ ի Մարտի երեքն»:

2. Թղ. 3ա (Բ. սիւնակ). Քարոզ նախկին ի վերայ Հոգւոյն սրբոյ... զգործս ձեւաց իմոց...: Ա. քարոզ Պէնտէկոստէի՝ Հոգւոյն սրբոյ զալստեան ի վերայ բանին Յօհաննու Ժղ. 15 ուր ասէ Տէրն. Եթէ սիրէք զիս զպատուիրանս իմ պահեսցիք...: Բնաբանս այս ունի չորս մասունս. նախ թէ Հոգին սուրբ պարգեւի պահողացն պատուիրանացն Քրիստոսի:

3. Թղ. 14ա. Քարոզ երկրորդ: Երկրորդ քարոզ Ս. Երրորդութեան. ի վերայ բանին Յօհաննու՝ Երեք են որ վկայեն...: Չայս քարոզս ի պատիւ սրբոյ Երրորդութեան եւ ի դաւանութիւն ճշմարտութեան ի բերանոյ վարդապետաց կերակուր ջամբելի շարագրեցաք եւ նախ տեսանելի է թէ արդեօք պարտեցէ տօնել սրբոյ Երրորդութեան:

4. Թղ. 18ա. Քարոզ երրորդ երկրորդ կերակէին զկնի Պէնտէկոստէին ի վերայ բանին Ղուկասու Գ. գլ. ԻԵ. համարի Արդարեւ ասեմ ձեզ զի բազում այրիք...: Որպէս ասէ սուրբ հայրն Եփրեմ ի մեկնութեան Եսայեայ թէ կիսոյն պատժովք այլք զզատանան:

5. Թղ. 24բ. Քարոզ չորրորդ ի վերայ Երման վերապէն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին:

6. Թղ. 26բ. Քարոզ հինգերորդ ի վերայ տօնի եկեղեցւոյ կարգեալ ի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին յի ի վերապէն:

7. Թղ. 31բ. Քարոզ վեցերորդ՝ Երրորդ կիրակէի զկնի Հոգւոյն սրբոյ զալստեան:

8. Թղ. 38ա. Քարոզ եօթներորդ՝ Չորրորդ կիրակէին զկնի Պէնտէկոստէին:

9. Թղ. 40ա. Քարոզ Ութերորդ. Ե. երրորդ կիրակէի զկնի Պէնտէկոստէին ի վերայ Մատթ. ԺԳ. 24:

10. Եւ այսպէս յառաջ մինչեւ քարոզ ձժԴ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. էջ 1017. Փառք... Արդ ի յանկ ելեալ կատարեցաւ զսուրբ զիրքս քարոզի որ յինչն ունի հաւաքեալ զվարդ սուրբ եկեղեցւոյ. այսինքն աւուր ըստ պատշաճի խորհուրդ պայծառութեան հաւատոյս: Չորս աւարտ եղեւ սորին ի թուականութեան մերում ՌՄԼԵ ի քահանայապետութեան Տեառն Ղուկասու շնորհալոյ սրբազանի եւ Ընդհր. Հայոց կաթողիկոսի որ ի սուրբ Միածնաիջի եւ երկուց զերջնաի պատրիարկաց սրբոյն Սաղիմայ Յօվակեմի եւ Կ. Պոլսոյ Տեառն Չաքարիայ աստուածարան վարդապետաց. իսկ արդեամբք եւ գոյիւք ի բարեաւ վայելման յԵղոկիացւոյ երջանկաշնորհի Տեառն Դաւթի քաղցրածորան վարդապետի Կեսարիոյ սուրբ Կարապետի վանուց հարապատ միարանի ձեռամբ յԵղոկիայ տէր Մկրտիչի սխալամած զբշի, նաեւ մեղօք վերաւոր եւ ոչ սակաւ անարժանի:

էջ 1080. Թուին ՌՄԼԵ Հոկտեմբերի է. պատուական եւ անպին մարգարիտ տառս այս կազմեցաւ ձեռամբ մեղսամած տրտամսիրտ Յակոբ դպրի ի ժամ ձերութեանս. որ եւ բարեաւ վայելեցէ զստացող սորա ամէն: (Ասկէ յառաջ կայ ծածկագրութիւն մը:)

**7. Յ Ա Յ Ս Մ Ա Ռ Ի Ր Ք Ի Վ Ա Ռ Ն Ա**

ԹՈՒՂԹՔ՝ 195: — ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 43 × 28: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 33 × 18 երկսիւն: — ԹԵՐԹՔ՝ նշանակուած, բայց խոսակցուած: — ՆԻԻԹ՝ գորաւոր եւ հաստ բուրք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ խեղճ, սկզբէն, մէջէն ու ետեւէն պակաս: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿ՝ չուցի: — ԿԱՁՄ՝ չուցի, ինկած ու քայքայուած: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ բաւական յաջող: — ԽՈՐԱՆՔ՝ չուցի: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ ամէն ամառ առջեւ, պզտիկ, խեղճ: — ԳԼԽԱԳԻՐՔ (Սկզբնագիրք)՝ բռնագիրք: — ԳԻՐ՝ բոլորգիր, յստակ ու սիրուն:

— ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԶ.— ԺԷ.— Գար: — ԳԾՈՂ՝ Նիկոլայոս: — ՏԵՂԻ՝ ամենօր: — ՏԷՐ՝ Մատենի Յարութիւն եւ Մինաս: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ ցիր ցան մի քանի հատ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Սեպակա- նութիւն Ամիրխանեան քոյրերու ի վառնա:

Մատենան է Յայամաւորք: Շատ պա- կասաւոր է եւ խառն դասաւորուած: Արդ մնացած են՝ Աճեկի ամսէն մաս մը, Արաց՝ ամբողջ, Մեհեկի՝ ամբողջ, Արեգ եւ Քա- ղոց՝ զրեթէ ամբողջ, թէեւ ետեւառջութիւն կայ: Արացի սկիզբն է՝ Արաց ամսոյ իԱ. եւ Յունվարի Ը. վերստին տօն է Ծննդեան եւ Յայտնութեան Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ վկայարանութիւն սրբոյն թէոփի- լեայ: Սուրբն թէոփիլոս էր ի Լիբիոյ հաւա- տով քրիստոնեայ եւ աստիճանաւ սարկա- լազ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Արաց Ա. էն յառաջ «Ողորմեա ստացողի Ս. Գրոցս մահ- տեի Յարութենին եւ ծնողացն Սարգսին եւ Հոսովին, եղբորն Գարբէլէին, քերցն Մա- ռիանին եւ Կատարին, հօրեղբորն տէր Առա- քէլին եւ ինձ բազմամեղ եւ անարժան Նիկո- ղայոս զծաւղի եւ ծնողացն իմոց Տէր Սարգ- սին Հէրիքնասին»: Արաց Բ.՝ Քրիստոս Աս- տուած... ողորմեա ստացողի սուրբ գրոցս մահտեի Յարութենին եւ ծնողացն Սարգսին եւ Հոսովին, եղբորն Գարբէլէին, քերցն Մա- ռիանին եւ Կատարին, հօրեղբորն տէր Առաքելին եւ սրբազրոյի սորա եւ զծողի»: Արաց Գ.՝ «... Տէր Յիսուս ողորմեա ստա- ցողի գրոցս մահտեի Մինասին եւ ծնողացն Մնացականին եւ Նթարին, հօրեղբորն տէր Թառառնին եւ սրբազրոյի սորա տէր Սարգսին եւ զծողի Նիկոլայոսին եւ թուղթ կոկողին եւ զաղափար շնորհողին»: Մեհե- կի ժԵ.՝ «... Մանաւանդ ստացողի գրոցս Յարութենին եւ ծնողացն Սարգսին եւ Հոսո- մին: Եղբորն Գարբէլէին, քերցն Մարիանին եւ Կատարին, հօրեղբոր Տէր Առաքելին...»:

Համանման յիշատակագրութիւններ (նոյն անուններու կրկնութեամբ) կը գտնուին զրեթէ ամէն վկայարանութեան ետեւ: Գլխա- լոր յիշատակարանը կը պակսի:

(Շարունակելի:)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ



**ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅԿԵԿԱՆ ՊԸՆԹԵՆՆԵՐՈՒՄ**

(Շարունակելի:)

**ԱՂԵՔՍԱՆԳՐ ԵՐԻՑԵԱՆ**  
(1841—1908)

Ուզում էք ծանօթանալ կովկասահայերի նոր շրջանի պատմութեան, նրա տնտեսա- կան, քաղաքական եւ կուլտուրական կեանքի բնորոշ մօմէնտների հետ: Ուզում էք ու- սումնասիրել Ներսիսեան դպրոցի պատմու- թիւնը, հայկական տղապարտութեան պատմու- թիւնը եւ այլ պատմական արժէքաւոր նիւ- թեր, ապա բաց արէք «Ամեկայն Հայոց կա- քողիկոսութիւնը եւ կովկասի հայք ժԹ. դա- րում», «Պատմութիւն 75ամեայ գոյութեան Ներսիսեան հոգեւոր դպրոցի», «Ներսէս Ե. Աշտարակեցի», «Խաչատուր Աբովեանի կեն- սագրութեան համար նոր նիւթեր», «Հայկա- կան տպագրութեան պատմութիւնը» եւ այլն:

Այդ պատմական հատորների ճակատին գրուած է մի անուն — Աղէֆասեղը Երի- ցեան:

Խօշիվանքում, Յովհաննէս Թումանեանի եւ Աշուղ Զիւանու գերեզմաններին կից, կայ երկաթէ ցօղերով հիւսուած մի ցանկապատ: Այդտեղ է հանդէս գտնուող Երիցեանը:

Մուգ-մոխրագոյն կրանիտէ քարից, բարձր, հաստ եւ քառակուսի երկու պա- տուանդանից կերտուած մի կոթող զարդա- ռել է նրա հողակոյտը: Վերելի քառակուսի Փորձաներով քանդակուած պատուանդանի հարաւային կողմը, սեւ փայլուն մարմար քարի վրայ փորագրուած է.

ԱՂԵՔՍԱՆԳՐ ԴԱԻԹԵԱՆ  
ԵՐԻՑԵԱՆ  
1841—1908

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ**  
(1869—1923)

Այդ Երիցեանի եւ Աշուղ Զիւանու շի- րիմների մօտ հայեացքս գրաւում է պարզ եւ անպաճոյճ մի քար, որի ճակատին կար- ղում եմ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Խորն ու կարօտալի մի զգացմունք յու- զում է հողեկան աշխարհս եւ ահա աչքերիս տառջ պատկերանում սիրելի պօէան իր չի- նար բոյով, բարի դէմքով եւ ժպտուն ու խօ- սուն աչքերով:

Պատկերանում են նաեւ մեծ արուեստա- ղէտի վրձինած գեղարուեստական աննման կտանները — «Անուշ», «Սասունցի Դաւիթ», «Թմբկաբերդի առումը», «Ա՛խ, Թամար», «Անիծած հարսը», «Փարսանա», «Հին օր- հնութիւն», «Շունն ու կատուն», «Գութանի երգը», ո՞ր մէկ գեղեցիկ նկարը, ո՞ր մէկ արձանը յիշել, ո՞ր մէկն արձանագրել:

Ի՞նչպէս չը յիշել եւ նրա քանդակած հերոսները — Թախճոտ եւ վշտահար Անուշը, զժբախտ Մարօն, դաժան Մօսիկը, դարդոտ Սարօն — աժդահա Սաֆօն: Շատերի սրտե- լում փորագրուած են այդ գեղեցիկ նկար- ները, շատերի հոգիներում քանդակուած այդ արձանները:

Այդտեղ է բանաստեղծի խոշոր արժա- նիքը:

Ո՞ր է, սակայն, մեծ արուեստագէտի հողակոյտի վրայ կերտուած մեծ արձանը, ո՞ր է նրա անուան արժանի հսկայ կոթողը: Չկայ ո՛չ մի արձան, ո՛չ մի կոթող: Միան- ղամայն աններելի վերաբերմունք: Արձանի սեղ յղկուած կլոր քարէ չորս սիւներ՝ եր- կաթէ փշաթելերով զարդարել են հողակոյտը, որի հիւսիսային կողմը բազմած քառակուսի փոքր, անպաճոյճ քարի վրան սեւ տառերով փորագրուած է.

ՅՈՎՀԱՆՆԵՍ  
ԹՈՒՄԱՆԵԱՆ  
1869 † 1923

**ՆԱՐ-ԴՈՍ**  
(ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)  
(1867—1933)

«Աննա Սարոյեան», «Տանտիրոջս աղ- ջիկը», «Սպանուած աղաւնի», «Պայքար», «Մահ» — ահա գեղարուեստական այն մեծ եւ նուրբ նկարները, որոնք նկարուած են տաղանդաւոր արուեստագէտի վրձինով: Այդ մեծ նկարիչը, նուրբ արուեստագէտը Նար- Դոսն է, Միքայէլ Յովհաննիսեանը:

Կենդանի, շարժուն տիպեր, իրական, ճշգրիտ պատկերներ — ահա ձեր աչքերի առջեւ նկարուած են մէկը միւսից զբաւելչ, մէկը միւսից յուզիչ, երբ կարդում էք դուք նրա պատմուածքներն ու վէպերը: Կարդում էք, ապրում, զգացում, մտածում, տան- էք, ապրում, զգացում, մտածում, տան- ջում, կարդում էք առանց կտրուելու: Այդ- պէս է արուեստագէտ Նար-Դոսը:

1929 թուին Թիֆլիսում, հինգերորդ տպարանում առաջին անգամ ծանօթացայ Նար-Դոսի հետ: Ուղիղ վեց ամիս նոյն սե- ղանի վրայ, դէմ դիմաց նստած, միասին աշ- խատեցինք «Պրալետար» թերթի վրայ:

Ծայրահեղօրէն համեստ, մեղմ, սակա- լախօս, կարեկից եւ սրտացաւ ու միաժամա- նակ բարեխիղճ եւ ճշտապահ: Այսպէս էր Նար-Դոսը:

Թաւ յօնքերի տակից խօսում էին քեզ հետ խոհուն եւ խելացի աչքերը: Խնդրեցի զրել, թէ իր վէպերն ու հերոսները ո՞րքան իրական են, ո՞չալիտական: Չմերժեց: Նրա ձեռագիրը պահում եմ որպէս թանկագին յի- շատակ:

1933 թուի Յուլիսի 16ն է, երեկոյեան ժամը 5ը: «Պրալետար» թերթի խմբագրատան դահլիճը հաւաքուել են գրողները, երաժիշտ- ները, նկարիչները, արուեստագէտները: Հա- մախմբուել են ծաղկեպսակներով ծածկուած դադաղի շուրջը: Հնչում է մերթ արեւելեան եւ մերթ արեւմտեան երաժշտութիւնը՝ թախ- ծոտ, յուզիչ խաղերով: Գրողները հերթով պահակներ են կանգնում դադաղի շուրջը: Ժամը վեցին երաժշտութեան հնչիւնների տակ դադաղը դուրս են բերում արուեստա- գէտները եւ խօսուն բազմութեամբ շրջապա- տուած, Աղատութեան հրապարակով շարժ- ւում դէպի Խօշիվանքի գերեզմանատուն:

Վերջին հրաժեշտի խօսք են ասում ա- րուեստի տարբեր ճիւղերի ներկայացուցիչ- ները — Դարբինեան, դաշնակահար Տէր- Դաւթեան, ոչժիւտօր Քափանակեան: Հրա- ժեշտ են տալիս եւ վրաց գրողները, խմբա- գիրներ: Բոյրն էլ շեշտում են եւ ընդզօում տաղանդաւոր ոչալիտ վարպետի կուլտու- րական մեծութիւնը:

Ժամը ութին, երաժշտութեան հնչիւն- ների տակ, դադաղն իջնում է գերեզման, բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի շիր- մին կից: Հողակոյտը ծածկուած է պսակների եւ ծաղիկների փնջերով: Խոնարհում են կարմիր դրօշակները:

**ԱՂԵՔՍԱՆԳՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑ**  
(1842—1914)

Հայ գրականութեան մէջ մի համեստ էջ է գրաւում Աղէքսանդր Քիշմիշեանը: Գրա- կան ասպարիզում նա յայտնի դարձաւ ժո- ղովրդի կեանքից վերցրած փոքրիկ պատկեր-